ԷՋՄԻԱԾԻՆԸ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

—

Վաղարշապատ, 9 հոկտ.

Մի երեք օր յետոյ կատարվելու են Էջմիածնում գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի հանդէսները։

Առ այժմ եկել են 5 պատգամաւորներ, սպասվում է և յայտնի է յանձնաժողովին, որ գալու են նաև զանազան տեղերից մօտ 40 հոգի։ Վեհափառը կարգել և հաստատել

է յոբելեանական յանձնաժողովի անդամներ. իսկ վերջիններս ընտրել են թէ իրանց միջից և թէ դրսից կարգադիր յանձնաժողովի անդամներ։

Յանձնաժողովի անդամներն են. Նախագահ՝ միաբան Գալուստ Տէր-Մկրտչեան, Բագրատ և Մատթէոս եպիսկոպոսները, Ներսէս, Վրթանէս և Գէորգ վարդապետները, Մ. Աբեղեան, Ս. Կանայեան, Գ. Ալթունեան և Գ. Էդիլեան։

Իսկ կարգադրիչ յանձնաժողովի անդամներն են՝ Մուշէ, Աբիսողէս, Ռուբէն, Վրթանէս և Գէորգ վարդապետները, Կարապետ սարկաւագը, Կ. Քոչարեան և Յ. Գրիգորեան։

Համազգային մեծ յոբելեանի տօնակարգը այսպէս է կատարվելու Էջմիածնում.

Ուրբաթ, հոկտ. 11-ին, եր. ժամը 5-ին, Նորին Վեհափառութիւնը պատգամաւորների և ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ՝ հանդիսաւոր թափօրով կը գնայ Մայր Տաճար՝ ներկայ լինելու ս. Թարգմանչաց յիշատակին կատարվելիք նախատօնակին։

Շաբաթ, ս. Թարգմանչաց տօնին, հոկտ. 12-ին, առ. ժ. 8-ին, Վեհը հանդիսաւոր կերպով կը գնայ Օշական՝ ամբողջ միաբանութեան և պատգամաւորների ուղեկցութեամբ։ Պատարագը կը սկսվի ս. Մեսրոպի գերեզմանի վրա ժամը 10-ին։ Պատարագից յետոյ հոգեհանգիստ կը կատարվի գրերի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Յետոյ պատգամաւորները կը բանախօսեն և կը լինի ուղերձների ընթերցումը։

Կիրակի, հոկտ. 13-ին, ժամը 9-ին, Մայր Տաճարի Իջման Սեղանի վրա հանդիսաւոր պատարագ և յետոյ հայրապետական մաղթանք կը կատարվի։ Պատարագից յետոյ, ժ. 12-ին, ճեմարանում կը կայանայ ցերեկոյթ երգեցողութիւնով և երաժշտութիւնով միասին և ապա հեռագիրների ընթերցումը։

Շաբաթ և կիրակի երեկոները ժ. 7-ին և երկուշաբթի առաւօտեան ժ. 10-ին՝ ճեմարանում կը լինեն գիտական ռեֆերատներ և խորհրդակցութիւն ուղղագրութեան խնդիրների շուրջը։ Շաբաթ և կիրակի երեկոները կը լինեն զինուորական երաժշտութիւն և հրավառութիւն թէ վանքի և թէ ճեմարանի բակում։

Վանքը մեծ շարժման մէջ է, աշխատում է եկող հիւրերին արժանավայել ընդունելութիւն ցոյց տալ։ Հիւրընկալ Վրթանէս աբեղան հիւրատան մաքրութեան, կարգ ու կանոնի համար արժանի է գովեստի։

Մաքրվում են և Վաղարշապատի շուկան ու փողոցները։ Հրապարակում շինվում են ժամանակաւոր վրանի ձեւով խանութներ՝ զանազան մրգեր ծախելու համար։ Գալիս են և զանազան տեղերից նուագածուների խմբեր։

Այսօր Վեհ. Հայրապետին ներկայացաւ Պետական Դումայի անդամ Մ. Պապաջանեանը։

Վ. Ք. Աղաղալեան